# Mastercard World Քարտի տրամադրման և սպասարկման սակագները

| Ծառայության տեսակ | Սակագին |
|---|---|
| 1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար | 15,000 ՀՀ դրամ տարեկան |
| 2. Վարկային գծի օգտագործման և/կամ հաշվի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք[1] | Վարկային գիծ/հաշվի գերածախս.<br>-ՀՀ դրամ` 18%<br><br>Գերածախս.<br>-արտարժույթ` 17% |
| 3. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված (միայն վճարային գործարքների համար) | գործարքի ձևակերպման օրվանից մինչև հաջորդ ամսվա 14-րդ օրացուցային օրը |
| 4. Ամսական պարտադիր մարումներ | 10% |
| 5. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով) | 10,000 ՀՀ դրամ տարեկան |
| 6. Քարտային հաշվի արժույթ | ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո |
| 7. Քարտի գործողության ժամկետ | 5 տարի |
| 8. Կանխիկ դրամի տրամադրում բանկոմատներում և կանխիկի տրամադրման կետերում` | |
| • *ԱԿԲԱ Բանկ* | ▪ Առանց վարկային գծի քարտերի դեպքում` դրամային քարտերի համար` 0% արտարժութային քարտերի համար` 1%<br>▪ Վարկային գծով քարտերի դեպքում` 2% |
| • *Այլ բանկեր Հայաստանում* | ▪ Առանց վարկային գծի քարտերի դեպքում` 1%<br>▪ Վարկային գծով քարտերի դեպքում` 2% |
| • *Այլ բանկեր արտերկրում* | ▪ Առանց վարկային գծի քարտերի դեպքում` 1%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ<br>▪ Վարկային գծով քարտերի դեպքում` 2%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ |
| 9. Բանկի քարտային հաշիվներին կանխիկ դրամի մուտքագրում «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկերի բանկոմատների միջոցով | 1% |
| 10. Կանխիկի տրամադրման օրական հիմնական սահմանաչափ | ▪ 2,000,000 ՀՀ դրամ<br>▪ 4,000 ԱՄՆ դոլար<br>▪ 4,000 եվրո |
| 11. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ | 10 |
| 12. Վճարային գործարքների օրական առավելագույն սահմանաչափ | ▪ 2,500,000 ՀՀ դրամ<br>▪ 5,000 ԱՄՆ դոլար<br>▪ 5,000 եվրո |
| 13. ՀՀ տարածքում քարտից քարտ փոխանցումներ առցանց հարթակների, «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով | 0.5% |
| 14. Բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումներ[2] | 0.2% |
| 15. Քարտով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկացման ծառայություն SMS հաղորդագրության միջոցով | 20 ՀՀ դրամ` ներառյալ ԱԱՀ<br>(գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց) |
| 16. Քարտով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկացման ծառայություն acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով | անվճար |
| 17. Քարտի Պին կոդի վերականգնում/փոփոխություն | անվճար |
| 18. Քարտի փոխարինում (Հայաստանում) | 2,000 ՀՀ դրամ |
| 19. USSD-տեղեկացում ծառայություն | 10 ՀՀ դրամ` ներառյալ ԱԱՀ<br>(գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց) |

**Ծանուցումներ**

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը բոլոր քարտերի համար կազմում է 0%:

ԱԿԲԱ ԲԱՆԿՈՒՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից»` հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես`

- ✓ միայն դրամային ավանդների դեպքում - 16 մլն ՀՀ դրամ,
- ✓ միայն արտարժութային ավանդի դեպքում - 7 մլն ՀՀ դրամ,
- ✓ և' դրամային (7 միլիոնից ավել), և' արտարժութային ավանդների դեպքում – միայն դրամային ավանդը` մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
- ✓ և' դրամային (7 միլիոնից պակաս), և' արտարժութային ավանդների դեպքում - դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը` 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվին ամսական կտրվածքով` յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

**Սակագներում օգտագործված տերմինների մեկնաբանություն**

- **Անտոկոս ժամանակահատված** - արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում վճարային գործարքների կատարման համար քարտի վարկային միջոցների օգտագործած մասը քարտային հաշվին մուտք անելու դեպքում քարտապանը տոկոսագումարներ չի վճարում:

---

[1] Վարկային գիծ չունեցող քարտերի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք սահմանվում է տվյալ քարտատեսակի համար նախատեսված տոկոսադրույքի միջակայքի առավելագույն չափով:

[2] Բացի նշված սակագնից Բանկի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դիմաց կիրառվում է նաև սպասարկող բանկի միջնորդավճար` 0.3%: Ընդ որում, ՀՀ այլ բանկերի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դեպքում ևս կարող է կիրառվել սպասարկող բանկի միջնորդավճար, որի չափը սահմանվում է տվյալ բանկոմատը սպասարկող բանկի կողմից:

թարմացվել է առ`10.06.2026թ.

- **Ամսական պարտադիր մարումներ** - յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված վարկային գծի նշված տոկոսը ենթակա է վճարման այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում: Տվյալ ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում քարտապանը պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարից վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները:
- **Լրացուցիչ քարտ** - գործող քարտային հաշվին կցված այլ վճարային համակարգի քարտ: Լրացուցիչ քարտը հնարավորություն է տալիս Քարտապանին օգտագործել հիմնական քարտային հաշվին առկա միջոցները, եթե հիմնական քարտի հետ առաջացել են չնախատեսված խնդիրներ կամ այն չի սպասարկվում տվյալ առևտրի/սպասարկման կետի և/կամ բանկոմատի կողմից:
- **Կից քարտ** - գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապանի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռում վերջինիս օգտագործել հիմնական քարտի հաշվին առկա միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանաչափերի շրջանակում: Յանկացած տեսակի քարտի համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների: Կից քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար:
- **Քարտով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկացման ծառայություն SMS հաղորդագրության միջոցով** - բանկում գրանցված հիմնական հեռախոսահամարին քարտապանի քարտային հաշվի շարժի վերաբերյալ sms-հաղորդագրության ստացում: